ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Կառավարությունն իր՝ 2026 թվականի մարտի 26-ի N 337-Ա որոշմամբ 2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանի 2026 թվականի ապրիլի 14-ի ՍԴԱՈ-56 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, և սույն գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Վարդանյանը:

Նշված գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի մայիսի 26-ին:

2. Գործը դատաքննության նախապատրաստելու շրջանակներում ի հայտ են եկել նշված պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանության և բնօրինակի (ռուսերեն) միջև թարգմանչական և բովանդակային որոշ առերևույթ անհամապատասխանություններ:

Գործով զեկուցողի կողմից Սահմանադրական դատարանում Կառավարության ներկայացուցչին է ուղարկվել գրություն՝ հնարավորինս սեղմ ժամկետում Սահմանադրական դատարանին պայմանագրի պաշտոնական թարգմանության շտկված տեքստը ներկայացնելու վերաբերյալ:

3. Հաշվի առնելով գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Վարդանյանի առաջարկությունն առ այն, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել սույն պայմանագրի ճշգրտված պաշտոնական տեքստը ստանալու և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«2025 թվականի հոկտեմբերի 10-ին Դուշանբեում ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկելի մատակարարման կազմակերպման և իրականացման կարգի մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել՝ մինչև կասեցման հիմքերը վերանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա.ԴԻԼԱՆՅԱՆ**

26 մայիսի 2026 թվականի
ՍԴԱՈ-88